ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/29 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ներքին աուդիտի ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.02.2024թ. ժամը 15:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Անի Թադևոսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝ Արա Հակոբյան /գնահատող/
Գագիկ Սարգսյան /գնահատող/
Ռազմիկ Օհանյան /բացող/
Հարություն Մարտիրոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/29** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/29** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ	procurement@crowe.am
2	«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ	perfectaudit@bk.ru
3	«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ և «ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կոնսորցիում	z.matosyan@mail.ru , auditglobaudit@mail.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ		«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ		«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ և «ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կոնսորցիում	
		Մավոր գների առաջարկված հանրագումարային գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	27900000	22000000	26400000	22500000	27000000	22500000	27000000

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը՝ դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ **«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ի** կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման իսկությունը ստուգելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5.2 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետով սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3,Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 14.02.2024թ. ժամը 12:00-ին

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 Ընթացակարգի բոլոր մասնակիցների հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 Մասնակիցներ **«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի և «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.3 «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ և «ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

6.3.1 «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ և «ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ միջև կնքված համատեղ գործունեության հիմնական պայմանագրում (այսուհետ՝ կոնսորցիումի պայմանագիր) նշված Գործընկեր-1-ը և Գործընկեր-2-ը չեն համապատասխանում դրա անբաժանելի մաս համարվող հավելվածում նշված Գործընկեր-1-ին և Գործընկեր-2-ին:

6.3.2 Կոնսորցիումի պայմանագրի 2.5 կետի համաձայն պայմանագրով իրականացվող գործունեության ընդհանուր գործերը վարում է Գործընկեր-1-ը՝ «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն, մինչդեռ էլեկտրոնային գնումների համակարգով Հայտը ներկայացվել է «ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կողմից, ինչը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի 4.3 կետի 5-րդ ենթակետի պահանջներին, համաձայն որի՝ եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված է, որ մասնակիցների ընդհանուր գործերը վարում է համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակից, ապա հայտը ներկայացվում, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են այդ մասնակցին:

6.3.3 Հայտով ներկայացված կոնսորցիումի պայմանագիրը կնքվել է 2024 թվականի փետրվարի 12-ին, մինչդեռ դրա անբաժանելի մաս համարվող հավելվածում հղում է կատարված կողմերի միջև 31.01.2024թ.-ին կնքված պայմանագրին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ և «ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կոնսորցիումի**ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.3 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկելուց և ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը ստանալուց հետո՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 19.02.2024թ. ժամը 12:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 **«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ և «ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից** սահմանված ժամկետում շտկվել են հանձնաժողովի կողմից 6.3 կետով արձանագրված անհամապատասխանությունները և շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8.2 ՀՀ ֆինանսների նախարարության 16.02.2024թ թիվ 12/12-1/3582-2024 գրությամբ հաստատվել է **«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ի** կանխիկ փողի ձևով ներկայացված հայտերի ապահովումների իսկությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից՝

1-ին տեղ զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին**,

2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել **«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ին և «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ և «ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կոնսորցիումին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով ՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Անի Թադևոսյան /նախագահ/

_____ Արա Հակոբյան

_____ Գագիկ Սարգսյան

_____ Ռազմիկ Օհանյան

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/